ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՑԱՆՑԻ 6-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՇՎԵԴԻԱՅՈՒՄ

2006 թվականի սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 1-ը Շվեդիայի Ֆլամսլաթ քաղաքում տեղի ունեցավ Եվրոպական Քրիստոնեական Բնապահպանական Ցանցի 6-րդ համագումարը:

Համագումարը կրում էր «Ապրել էներգիայի նոր դարաշրջանում» խորագիրը և հիմնականում նվիրված էր բնապահպանության հետ կապված խնդիրներին՝ դրանք քննելով արագորեն փոփոխվող աշխարհի համատեքստում, տարբեր երկրների ու Եկեղեցիների զարգացման գործընթացում՝ նպաստելով համագործակցությանը Եկեղեցիների և պետությունների միջև:

Համագումարը կոչ արեց Եկեղեցիների ներկայացուցիչներին, որպեսզի իրենց երկրների կառավարությունների և գործարարների հետ քննարկեն և համապատասխան լուծումներ գտնեն բնապահպանական հիմնախնդիրների համար:

Ժողովի նպատակն էր ի մի հավաքել Եվրոպայի քրիստոնեական բոլոր այն կազմակերպություններին, ովքեր մտահոգված են երկրագնդի բնապահպանական հարցերով: Գտնել միջոցներ գազով, նավթով, ատոմային էներգիայով աշխատող ձեռնարկություններին անցնելու վերականգնվող (բիո, հիդրո, քամու, արևի) էներգիայի տեսակների օգտագործմանը:

Ժողովին ներկա էին շուրջ 100 պատգամավորներ, ովքեր ժամանել էին Ավստրիայից, Բելգիայից, Մեծ Բրիտանիայից, Կանադայից, Դանիայից, Չեխոսլովակիայից, Ֆինլանդիայից, Հունաստանից, Գերմանիայից, Հոլանդիայից, Ռումինիայից, Շվեդիայից, Շվեյցարիայից, Իռլանդիայից, ինչպես նաև ներկայացուցիչներ Օրթոդոքս, Անգլիկան և Կաթոլիկ Եկեղեցիներից:

Սույն համագումարին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացրեց Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Մկրտիչ վրդ. Պռոշյանը:

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին